# Հայերեն հրատարակչության նախաբան

## Շվեյցարիայի Արտաքին գործերի դաշնային նախարար Միշլեն Քալմի-Ռեյ

«Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները. էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում» հրատարակությունը «Հաշտության պաշարներ» կազմակերպության կողմից իրականացված երկարատև, եռանդուն և վճռական աշխատանքի արդյունքն է: Հանդեսի առանձնահատկությունն, ըստ իս, կայանում է դրանում առկա՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին բազմակարծության և հիմնախնդրի կարգավորմանն ուղղված առաջարկների կառուցողական բնույթի մեջ: Նման համակցումը թույլ է տալիս, որ խոսքը ներկայացվի անմիջական կերպով, որի շնորհիվ, հուսով եմ, հայերն ու ադրբեջանցիները հնարավորություն կստանան ծավալել արդյունավետ և հիմնավորված բանավեճ, իսկ ապագայում այն վերափոխել հակամարտության կողմերի միջև կառուցողական երկխոսության:

Իմ հայրենիքը՝ Շվեյցարիան, ազգերի և ժողովուրդների միջև երկխոսության հաստատման սկզբունքի ջատագովն է, քանզի մենք համարում ենք, որ երկխոսությունը հակամարտությունների կարգավորման միակ ողջամիտ միջոցն է: Վստահ եմ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը հնարավոր է գտնել հայ և ադրբեջանցի հասարակությունների միջև մտքերի եռանդուն փոխանակման և նրանց ներկայացուցիչների միջև անկեղծ և կանոնակարգված բանավեճի վրա հիմնված խաղաղ կարգավորման գործընթացի շրջանակներում:

Ավելին, ինչպես հանդեսի հեղինակներն են շեշտում, նախապաշարմունքները և հակառակ կողմի, նրա պատմության և պատասխանատվությունների մասին կանխակալ ընկալումները վճռորոշ դերակատարում ունեցան Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման և սրացման գործում: Այստեղ ներկայացված տեսակետներն ու կարծիքները կարող են օգնել երկու կողմերին վեր կանգնել այդ ընկալումներից և ավելի խորությամբ ըմբռնել հակառակ ճամբարում տիրող իրականությունները, օրինակ՝ տառապանքը, որ պատճառում է օրրանից տեղահանված լինելը, հետապնդման երկյուղը և հակամարտության կարգավորման գոհացուցիչ հեռանկարի բացակայությունը:

Դրանք պետք է նաև հաշտեցման պայմանների և փոխզիջումների մանրամասների շուրջ քննարկումների ծավալման խթան հանդիսանան: Ես գիտակցում եմ, որ շատերը փոխզիջման գնալու պատրաստակամությունը դիտում են որպես թուլության արտահայտություն կամ նույնիսկ հրաժարում այն նպատակից, որին իրենք ի սկզբանե հետամուտ են եղել: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասի համար հնարավոր միակ ապագան խաղաղության հաղթանակն է: Սրան հասնելու համար հայերն ու ադրբեջանիցները ստիպված են անցնել փոխզիջումների ճանապարհով, որպեսզի ձեռք բերեն մի լուծում, որն ընդունելի լինի բոլոր կողմերի համար:

Կցանկանայի ընդգծել, որ ԵԱՀԿ և Մինսկի խմբի գործունեությունն էական նշանակություն ունի խաղաղության հաստատման գործընթացում առաջընթաց գրանցելու տեսանկյունից: Սա մի դժվարին առաջադրանք է և միանշանակորեն ներառելու է չարդարացված հույսեր: Մինչդեռ համոզված եմ, որ սա է բանակցությունների այն շրջանակը, որտեղ կարելի է հասնել այնպիսի համաձայնության, որը վերջ կդնի Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և քաղաքացիական հասարակությունների ներսում և դրանց միջև երկխոսության շնորհիվ կարժանանա շահագրգիռ կողմերի հավանությանը:

Հուսով եմ, որ ներկայացված հոդվածներին քննադատաբար կմոտենաք: Մաղթում եմ նաև արդյունավետ քննարկումներ: